ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 802-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2017.07.26/47(1322) Հոդ.734	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	06.07.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	14.07.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ԻՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2017 թվականի N 802-Ն

ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ԻՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 350-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 351-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) հարկ վճարողների կողմից առանձին ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմին ներկայացնելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) այն ապրանքների ցանկը, որոնց արտադրության, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմին՝ համաձայն N 2 հավելվածի.

3) այն օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների ցանկը, որոնց արդյունահանման, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմին՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2017 թ. հուլիսի 14
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
հուլիսի 6-ի N 802-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ԻՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են առանձին ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվությունները (այսուհետ՝ հաշվետվություններ) հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները տարածվում են սույն որոշմամբ սահմանված՝ NN 2 և 3 հավելվածների ցանկերում (այսուհետ՝ ցանկեր) ներառված ապրանքները, այդ թվում՝ օգտակար հանածոները և դրանց արտադրատեսակները, արտադրողների և ներմուծող-իրացնողների վրա:

3. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով տրված սահմանումների իմաստն ու նշանակությունը:

4. Սույն կարգի իմաստով առանձին ապրանքներ, այդ թվում՝ օգտակար հանածոներ և դրանց արտադրատեսակներ արտադրող և ներմուծող-իրացնող են համարվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) հարկ վճարողները, որոնք արտադրում կամ ներմուծում-իրացնում են ցանկերում ներառված ապրանքները, այդ թվում՝ օգտակար հանածոները և դրանց արտադրատեսակները:

5. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն կարգի 2-րդ կետում նշված հարկ վճարողները հաշվետվություններն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում մինչև այդ ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ համաձայն ձևի:

6. NN 2 և 3 հավելվածների ցանկերում ներառված ապրանքատեսակները ներմուծելուց հետո բացառապես ներմուծողի ներտնտեսական կարիքների կամ այլ գործունեության տեսակների կամ արտադրության համար օգտագործվելու դեպքում ներմուծողն այդ ապրանքատեսակների մասով հարկային մարմին հաշվետվություններ չի ներկայացնում, եթե արդյունքում ստեղծված նոր արտադրատեսակը ներառված չէ NN 2 և 3 հավելվածների ցանկերում:

7. Հարկ վճարողները հաշվետվությունները ներկայացնելուց հետո Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով կարող են ներկայացնել ճշտված հաշվետվություններ:

8. Սույն կարգի իմաստով հաշվետու ժամանակաշրջան է համարվում ցանկերում ներառված յուրաքանչյուր արտադրատեսակի (օգտակար հանածոյի) և ապրանքատեսակի համար նշված ժամանակահատվածը (ամիսը կամ եռամսյակը):

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան

Ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՒ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ		Փաստաթղթի հերթական համարը N_____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ* (20__Թ._____ ԱՄԻՍԸ ԿԱՄ _____ԵՌԱՄՍՅԱԿԸ) [1]		
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)	[2]	
Կազմակերպության անվանումը	[3]	
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	[4]	
Գտնվելու (բնակության) վայրը	[5]	
Հեռախոսահամարը	[6]	

[1] տողում նշվում է հաշվետու տարվա այն հաշվետու ժամանակաշրջանը (ամիսը կամ եռամսյակը), որի համար ներկայացվում է հաշվետվությունը: Ճշտված հաշվետվություն ներկայացնելու դեպքում աջ սյունակում կատարվում է նաև «X» նշագրումը.

[2] տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն).

[3] տողում նշվում է կազմակերպության անվանումը.

[4] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը.

[5] և [6] տողերում նշվում են կազմակերպության գտնվելու վայրը և աշխատանքային հեռախոսահամարը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և աշխատանքային (տան) հեռախոսահամարը.

Արտադրատեսակի կամ ապրանքատեսակի անվանումը	Արտադրատեսակի ԱԴԳՏ-ի ծածկագիրը	Ապրանքատեսակի ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Չափի միավորը	Մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	Արտադրված քանակը	Ներմուծված քանակը	Իրացված քանակը	Կորուստները	Օգտագործված է սեփական արտադրությունում	Մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	Իրացման շրջանառությունը (ներառյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը)	Միավորի միջին գինը (ներառյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը)
[7]	[8]	[9]	[10]	[11]	[12]	[13]	[14]	[15]	[16]	[17]	[18]	[19]

Ցանկերում ներառված արտադրատեսակների (այդ թվում՝ օգտակար հանածոների) արտադրության (այդ թվում՝ արդյունահանման) մասով հաշվետվությունը լրացվում է ըստ արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի (ԱԴԳՏ), իսկ ներմուծված ապրանքատեսակների մասով՝ ըստ

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ).

[7] սյունակում լրացվում են համապատասխանաբար արտադրված արտադրատեսակների (արդյունահանված օգտակար հանածոների) և ներմուծված ապրանքատեսակների անվանումները, որոնցից յուրաքանչյուրը լրացվում է առանձին տողում.

[8] սյունակում լրացվում է ցանկերում նշված արտադրատեսակի (օգտակար հանածոյի) ԱԴԳՏ-ի ծածկագիրը.

[9] սյունակում լրացվում է ցանկերում նշված ապրանքատեսակի ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը.

[10] սյունակում լրացվում է ցանկերում նշված համապատասխան չափի միավորը.

[11] սյունակում լրացվում է արտադրատեսակի (օգտակար հանածոյի) կամ ապրանքատեսակի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին՝ համապատասխան չափի միավորով.

[12] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում արտադրված (արդյունահանված) արտադրատեսակի (օգտակար հանածոյի) քանակը՝ համապատասխան չափի միավորով.

[13] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ներմուծված ապրանքատեսակի քանակը՝ համապատասխան չափի միավորով.

[14] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում իրացված արտադրատեսակի (օգտակար հանածոյի) քանակը՝ համապատասխան չափի միավորով կամ իրացված ապրանքատեսակի քանակը՝ համապատասխան չափի միավորով.

[15] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած պատահական, բնական կամ այլ փաստացի կորուստների լրիվ քանակները՝ (անկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ կորուստների համար սահմանված չափերը գերազանցելու հանգամանքից) համապատասխան չափի միավորով.

[16] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում սեփական արտադրությունում օգտագործված (այդ թվում՝ նաև անհատույց տրամադրված) արտադրատեսակի (օգտակար հանածոյի) կամ ապրանքատեսակի քանակը՝ համապատասխան չափի միավորով.

[17] սյունակում լրացվում է արտադրատեսակի (օգտակար հանածոյի) կամ ապրանքատեսակի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ համապատասխան չափի միավորով.

[18] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում համապատասխան արտադրատեսակի (օգտակար հանածոյի) կամ ապրանքատեսակի իրացման շրջանառությունը՝ դրամով (ներառյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը).

[19] սյունակում լրացվում է համապատասխան արտադրատեսակի (օգտակար հանածոյի) կամ ապրանքատեսակի միջին գինը՝ դրամով (ներառյալ ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը): Ցանկերում նշված յուրաքանչյուր ծածկագրին դասվող մեկից ավելի ենթակարգերի կամ ենթադասերի արտադրատեսակների (օգտակար հանածոյի) կամ ապրանքատեսակների համար առանձին հաշվարկված միջին գները միջինացվում են ցանկերում նշված յուրաքանչյուր ծածկագրի համար:

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
հուլիսի 6-ի N 802-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ԱԴԳՏ-ի ծածկագիրը	Արտադրատեսակի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Ապրանքատեսակի անվանումը	Չափի միավորը	Ներկայացվող հաշվետվության պարբերականությունը (հաշվետու ժամանակաշրջանը)
1	2	3	4	5	6
10.13.14	երշիկեղեն և համանման մսամթերք՝ մսից, ենթամթերքից կամ կենդանիների արյունից	1601	երշիկներ և մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված համանման մթերք	կգ	եռամսյակային
10.12.10	միս՝ ընտանի թռչունների՝ թարմ կամ պաղեցրած	0207	ընտանի թռչունների միս և ենթասննդամթերք՝ դասակարգված 0105 ապրանքային դիրքում	կգ	եռամսյակային
10.12.20	միս՝ ընտանի թռչունների՝ սառեցրած				
10.12.40	ենթամթերք՝ ընտանի թռչունների, սննդային				
10.51.11	կաթ՝ հեղուկ, մշակված	0401	կաթ և սերուցք, չխտացրած և շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր չավելացրած	կգ	եռամսյակային
10.51.12	կաթ և կաթնասեր՝ 6%-ից ավելի յուղայնությամբ, ոչ խտացրած, ոչ քաղցրացրած				
10.51.21	կաթ՝ չոր, յուղազերծված	0402	խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի, շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած	կգ	եռամսյակային
10.51.22	կաթ՝ չոր, անարատ				
10.51.51	կաթ և կաթնասեր՝ խտացրած կամ խտացրած շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելումներով, ոչ պինդ ձևերով				

10.51.52	մածուն և խմորման ենթարկված կամ թթվեցված կաթի կամ կաթնասերի այլ տեսակներ	0403	թան, կտրված կաթ և կաթնասեր, յոգուրտ, կեֆիր և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	կգ	եռամսյակային
10.51.54	կաթնաշաքար և կաթնաշաքարային օշարակ				
10.51.55	շիճուկ	0404	կաթնային շիճուկ	կգ	եռամսյակային
10.51.30	կարագ և կաթնային մածիկներ	0405	կարագ	կգ	եռամսյակային
10.51.40	պանիր և կաթնաշոռ	0406	պանիր, կաթնաշոռ	կգ	եռամսյակային
10.52.10	պաղպաղակ և ուտելի սառույց	2105 00	պաղպաղակ	կգ	եռամսյակային
01.47.21	հավի ձու՝ կճեպով, թարմ	0407	թռչնի ձու՝ կճեպով	հատ	եռամսյակային
01.47.22	ձու՝ կճեպով, այլ ընտանի թռչունների, թարմ				
01.47.23	ձու՝ թխսամեքենաների համար				
10.83.11	սուրճ՝ առանց կոֆեինի կամ բոված	0901	սուրճ, սուրճի թեփ, սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճի պարունակությամբ	կգ	եռամսյակային
10.83.13	թեյ՝ կանաչ (խմորման չենթարկված), թեյ՝ սև (խմորման ենթարկված) և թեյ՝ մասնակի խմորման ենթարկված, 3 կիլոգրամից ոչ ավելի փաթեթվածքով	0902	թեյ	կգ	եռամսյակային

10.83.12	սուրճի փոխարինիչներ. սուրճի կամ դրա փոխարինիչների լուծամզուքներ, բնահյութեր (էսենցիա) և խտանյութեր. սուրճի ունդերի կեղև և կճեպ	2101	սուրճի, թեյի և մատեի խտահյութ, լուծվող սուրճ	կգ	եռամսյակային
10.83.14	թեյի լուծամզուքներ, բնահյութեր (էսենցիա) և խտանյութեր. թեյի կամ մատեի հիման վրա այլ մթերք				
01.11.11	ցորեն՝ կարծր	1001	ցորեն և մեսլին	կգ	եռամսյակային
01.11.12	ցորեն՝ բացի կարծր ցորենից				
10.61.21	ալյուր՝ ցորենի և աշորայի	1101 00	ալյուր՝ ցորենի կամ ցորենաաշորային	կգ	եռամսյակային
10.89.15	լուծամզուքներ և հյութեր՝ բուսական, պեպտինանյութեր, սոսինձներ և թանձրացուցիչներ՝ բուսական	1302	բուսական հյութ և խտահյութ	լ	եռամսյակային
10.73.11	մակարոնեղեն և համանման ալյուրե արտադրատեսակներ	1902	մակարոնեղեն	կգ	եռամսյակային
10.71.11	հացաբուլկեղեն՝ թարմ (ոչ երկարատև պահման)	1905	հաց, խմորեղեն, հրուշակեղեն, թխվածք, վաֆլի և այլ հացաբուլկեղեն	կգ	եռամսյակային
10.71.12	տորթեր, հրուշակներ (պիրոժնիներ), ալյուրե թարմ (ոչ երկարատև պահման) այլ հրուշակեղեն				
10.72.11	հացիկներ՝ խոթխոթան, պաքսիմատներ, չորահաց և համանման բոված հացամթերք				

10.72.12	թխվածքաբլիթ, մեղրաբլիթ և համանման արտադրատեսակներ. քաղցրաբլիթ. վաֆլի և վաֆլե թերթեր				
10.72.19	այլ հացաբուլկեղեն՝ չոր կամ երկարատև պահման				
10.39.17	այլ բանջարեղեն (բացի կարտոֆիլից)՝ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի՝ բացի բանջարեղենի պատրաստի կերակրատեսակներից	2002	լոլիկի մածուկ	կգ	եռամսյակային
10.32.11	տոմատի հյութ	2009	մրգահյութեր և բանջարեղենի հյութեր	լ	եռամսյակային
10.32.12	նարինջի հյութ				
10.32.13	թուրինջի հյութ				
10.32.14	արքայանարինջի հյութ				
10.32.15	խաղողի հյութ				
10.32.16	խնձորի հյութ				
10.32.17	մրգահյութերի և բանջարահյութերի խառնուրդներ				
10.32.19	այլ մրգահյութեր և բանջարահյութեր				
11.07.11	հանքային ջրեր և չքաղցրացրած, չբուրավետացված գազավորված խմիչքներ	2201	ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի)	լ	եռամսյակային
11.07.19	ոչ ալկոհոլային այլ խմիչքներ	2202	հանքային ջուր և ըմպելիք (շաքարով)	լ	եռամսյակային

11.05.10	գարեջուր՝ բացի գարեջրի արտադրության թափոններից	2203 00	գարեջուր	լ	ամսական
11.03.10	խմորման ենթարկված այլ խմիչքներ (խնձորագինի, տանձի գինի, մեղրագինի), ալկոհոլ պարունակող խմիչքների խառնուրդներ	2206 (բացառությամբ 2206 00 390, 2206 00 590, 2206 00 890)	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք)՝ բացառությամբ պտղային, հատապտղային գինիների և գինենյութի	լ	ամսական
11.02.11	գինի՝ խաղողի, փրփրուն	2204	խաղողի գինի, շամպայն	լ	ամսական
11.02.12	գինի՝ խաղողի, բացի փրփրուն գինուց. խաղողի քաղցրահյութ				
11.04.10	վերմուտ և այլ բուրավետացված խաղողի գինիներ	2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	լ	ամսական
		2206 00 390, 2206 00 590, 2206 00 890	պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	լ	ամսական
20.14.74	չբնափոխված էթիլային սպիրտ՝ 80 զանգ.%-ից ոչ պակաս սպիրտի պարունակությամբ	2207	էթիլային սպիրտ՝ չբնափոխված, սպիրտի 80%-ից ոչ պակաս խտությամբ, էթիլային և այլ սպիրտներ, բնափոխված՝ ցանկացած խտությամբ	լ	ամսական
20.14.75	էթիլային սպիրտ և այլ բնափոխված սպիրտներ՝ ցանկացած խտությամբ	2208՝ բացառությամբ 2208 60, 2208 20 120	էթիլային սպիրտ՝ չբնափոխված, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքներ, լիկյորներ և ալկոհոլային այլ խմիչքներ	լ	ամսական
11.01.10	ալկոհոլային խմիչքներ՝ թորած	2208 60	օղի	լ	ամսական

		2208 20 120	կոնյակ	լ	ամսական
12.00.11	սիգարետներ, սիգարներ, ծխագլանակներ և համանման արտադրատեսակներ՝ ծխախոտից կամ դրա փոխարինիչներից	2402	սիգարետ և սիգար	հատ	ամսական
		2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	կգ	ամսական
08.93.10	աղ և նատրիումի քլորիդ, մաքուր. ծովի ջուր	2501 00	աղ, նատրիումի քլորիդ, ծովի ջուր	կգ	եռամսյակային
10.84.30	աղ՝ սեղանի (կերակրի)				
10.41.21	սոյայի յուղ՝ չզտած	1507	սոյայի յուղ և դրա զտամասերը՝ չզտած կամ զտած, առանց փոփոխելու քիմիական բաղադրությունը	լիտր	եռամսյակային
10.41.23	ձիթապտղի յուղ՝ չզտած	1509	ձիթապտղի ձեթ	լիտր	եռամսյակային
10.41.24	արևածաղկի յուղ՝ չզտած	1512	արևածաղկի, բամբակի ձեթ	լիտր	եռամսյակային
10.41.25	բամբակի յուղ՝ չզտած				
19.2	նավթամթերք	2709 00	հում նավթ և նավթամթերք	տոննա	ամսական
19.2	նավթամթերք	2710՝ բացառությամբ 2710 20	նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ)	տոննա	ամսական
		2710 20	դիզելային վառելիք	տոննա	ամսական
		2711 12	հեղուկ գազ (պրոպան)	կգ	ամսական
		2711 13	բնական գազ (բութան)	$մ^3$	ամսական

22.11.11	նոր ռետինե դողեր և դողածածկաններ՝ մարդատար ավտոմեքենաների համար	4011	օդաճնշական ռետինե անվադողեր, նոր	հատ	եռամսյակային
22.11.12	նոր ռետինե դողեր և դողածածկաններ՝ մոտոցիկլների կամ հեծանիվների համար				
22.11.13	նոր ռետինե դողեր և դողածածկաններ՝ ավտոբուսների, բեռնատար մեքենաների կամ ավիացիայում օգտագործելու համար				
22.11.14	նոր ռետինե դողեր և դողածածկաններ՝ գյուղատնտեսական մեքենաների համար. այլ նոր ռետինե օդաճնշական դողեր և դողածածկաններ				
27.20.11	առաջնային տարրեր և առաջնային տարրերի մարտկոցներ	8506	սկզբնական տարրեր և սկզբնական մարտկոցներ	հատ	եռամսյակային
27.20.12	առաջնային տարրերի և առաջնային տարրերի մարտկոցների մասեր				
23.11.11	թերթապակի՝ ձուլած, գլոցած, ձգած կամ փչած, բայց այլ եղանակով չմշակված	7003	ապակի՝ ձուլած և գլանված, թերթերով կամ պրոֆիլավորած, կլանող	$մ^2$	եռամսյակային
		7004	ապակի՝ ձգված և փչված, թերթերով, գլանով, անդրադարձնող կամ չանդրադարձնող շերտով, բայց չմշակված որևէ այլ եղանակով		

17.12.12	թուղթ և ստվարաթուղթ՝ ձեռքի կաղապարման	4802	թուղթ և ստվարաթուղթ՝ ոչ կավճապատ, թուղթ և ստվարաթուղթ՝ ձեռքով կաղապարված	կգ	եռամսյակային
17.12.13	թուղթ և ստվարաթուղթ՝ օգտագործվող որպես հիմք լուսազգայուն, ջերմազգայուն, էլեկտրազգայուն թղթի համար. թուղթ-հիմք՝ պատճենաթղթի համար. թուղթ-հիմք՝ պատի պաստառների համար				
17.12.14	այլ թուղթ և ստվարաթուղթ՝ գծագրական նպատակների համար				
17.12.73	թուղթ և ստվարաթուղթ՝ կավճած ճենակավով կամ այլ ոչ օրգանական նյութերով՝ գրելու, տպագրական, գծանկարչական և այլ նպատակների համար	4810	թուղթ և ստվարաթուղթ՝ կավճապատ	կգ	եռամսյակային
17.12.74	ամրաթուղթ կավճած ճենակավով կամ այլ ոչ օրգանական նյութերով (բացի գրելու, տպագրական, գծանկարչական նպատակների համար օգտագործվող ամրաթղթից)				
17.12.75	ամրաստվարաթուղթ՝ կավճած ճենակավով կամ այլ ոչ օրգանական նյութերով (բացի գրելու, տպագրական, գծանկարչական նպատակների համար օգտագործվող ամրաստվարաթղթից)				

27.40.11	լամպեր՝ հերմետիկ, նեղ ուղղորդված լույսի				
27.40.12	հալոգենային շիկացման լամպեր՝ վոլֆրամաթելով, բացի անդրամանուշակագույն և ենթակարմիր ճառագայթման լամպերից				
27.40.13	լամպեր՝ շիկացման, 200 Վտ-ից ոչ ավելի հզորությամբ, 100 Վ-ից ավելի լարման՝ չներառված ուրիշ խմբավորումներում	8539	լամպեր՝ շիկացման էլ., կամ գազալիցքավորման, ուլտրամանուշակագույն կամ ինֆրակարմիր, աղեղային լամպեր	հատ	եռամսյակային
27.40.14	այլ շիկացման լամպեր՝ չներառված ուրիշ խմբավորումներում				
27.40.15	լամպեր՝ պարպումային. լամպեր անդրամանուշակագույն և ենթակարմիր ճառագայթման. աղեղալամպեր				
03.00.2	Ձուկ թարմ կամ պաղեցրած	0302	Ձուկ թարմ կամ պաղեցրած	կգ	եռամսյակային
03.00.3	Ձուկ վերամշակված կամ պահածոյացված	1604	Ձուկ վերամշակված կամ պահածոյացված	կգ	եռամսյակային

(հավելվածը լրաց. 29.04.21 N 655-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
հուլիսի 6-ի N 802-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԻՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ԱԴԳՏ-ի ծածկա-գիրը	Արտադրատեսակի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Ապրանքատեսակի անվանումը	Չափի միավորը	Ներկայացվող հաշվետվության պարբերականությունը (հաշվետու ժամանակաշրջանը)
1	2	3	4	5	6
08.11.11	մարմար և այլ կրաքարային գեղազարդային ու շինարարական քարեր	2515	մարմար, տուֆ, կրաքար, տրավերտին	մ³	եռամսյակային
23.70.12	այլ գեղազարդ կամ շինարարական մշակված քար և դրանից շինվածքներ. այլ արհեստական ներկած հատիկներ և փոշի՝ բնական քարից. շինվածքներ՝ շեղջաքարացված թերթաքարից				
23.70.11	մարմար, տրավերտին, լսնակուճ (ալեբաստր) մշակված և դրանցից շինվածքներ (բացի չորսվակասալերից, եզրաքարերից, սալերից, սալիկներից, խորանարդներից և համանման շինվածքներից). արհեստական ներկած հատիկներ, փշրանք և փոշի՝ մարմարից, տրավերտինից, լսնակուճից				
08.11.12	գրանիտ, ավազաքար և այլ գեղազարդային ու շինարարական քարեր	2516	գրանիտ, բազալտ, ծիրանաքար, ավազաքար	մ³	եռամսյակային

08.11.20	կրաքար և գիպս	2520	գիպս, ալեբաստր	մ³	եռամյակային
08.11.30	կավիճ և չկալցինացված դոլոմիտ	2509	կավիճ	մ³	եռամյակային
23.52.30	դոլոմիտ՝ կալցինացված կամ շեղջաքարացված	2518	դոլոմիտ	մ³	եռամյակային
				մ³	եռամյակային
08.11.40	թերթաքարեր	6803	թերթաքար՝ բնական մշակված	մ³	եռամյակային
08.12.11	ավազ՝ բնական	2505	բնական ավազ (բոլոր տեսակի)	մ³	եռամյակային
08.12.12	ճալաքար, կոպիճ, քարի հատիկներ, փշրանք և փոշի				
08.12.13	խարամի և համանման արդյունաբերական թափոնների խառնուրդներ՝ ճալաքարի, կոպիճի, խճի հավելույթով կամ առանց հավելույթի, շինարարական նպատակներով օգտագործելու համար				
08.12.21	ճենակավ և այլ ճենակավային կավեր	2507	սպիտակ ճենակավ (կաոլին)	մ³	եռամյակային
08.12.22	այլ կավեր, անդալուզիտ, կիանիտ և սիլիմանիտ, մուլիտ, հրակավային կամ դինասային հողեր	2508	կավ, բենտոնիտ, կիանիտ, անդալուզիտ	մ³	եռամյակային

23.51.11	ցեմենտի կլինկեր (թրծած բովախառնուրդ)	2523	պորտլանդցեմենտ, կավահողային ցեմենտ, խարամային ցեմենտ, սուպերսուլֆատային ցեմենտ և համանման հիդրավլիկ ցեմենտներ՝ չներկած կամ ներկած, պատրաստի կամ թրծած բովախառնուրդի ձևով	տոննա	եռամյակային
23.51.12	պորտլանդցեմենտ, արգնահողային, խարամային և համանման հիդրավլիկական ցեմենտ			տոննա	եռամյակային
23.52.10	կիր՝ չմարած, կիր՝ մարած և կիր՝ հիդրավլիկական	2522	չհանգած և հանգած կիր	մ³	եռամյակային
23.52.20	գիպս և գաջ	2520	գիպս, ալեբաստր	տոննա	եռամյակային
08.99.22	տեխնիկական ալմաստներ անմշակ, սղոցած կամ կոպիտ մշակված. պեմզա. զմռնիտ, կորունդ, նռնաքար և բնական այլ հղկանյութեր	2513	նաժդակ, չեչաքար, բնական նռնաքար և այլ հղկանյութ	մ³	եռամյակային
07.10.10	երկաթի հանքաքարեր	2601	երկաթի հանքաքարեր և խտահանքեր՝ ներառյալ թրծած երկաթաքարը	տոննա	եռամյակային
07.29.11	պղնձի հանքաքարեր և խտանյութեր	2603	պղնձի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
07.29.12	նիկելի հանքաքարեր և խտանյութեր	2604	նիկելի հանքաքարեր և խտահանքեր	տոննա	եռամյակային
07.29.13	ալյումինի հանքաքարեր և խտանյութեր	2606	ալյումինի հանքաքարեր և խտահանքեր	տոննա	եռամյակային
07.29.14	թանկարժեք մետաղների հանքաքարեր և խտանյութեր	2616	թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
		2607	կապարի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային

07.29.15	կապարի, ցինկի, անագի հանքաքարեր և խտանյութեր	2608	ցինկի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
		2609	անագի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
07.29.19	հանքաքարեր և խտանյութեր՝ այլ գունավոր մետաղների, չներառված ուրիշ խմբավորումներում	2605	կոբալտի հանքաքար, խտանյութեր	տոննա	եռամյակային
		2610	քրոմի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
		2611	վոլֆրամի հանքաքարեր և խտահանքեր	տոննա	եռամյակային
		2613	մոլիբդենի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
		2614	տիտանի հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
		2615,2617	այլ հանքաքար, խտանյութ	տոննա	եռամյակային
24.41.10	արծաթ՝ չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով	7106	արծաթ՝ անմշակ կամ կիսամշակ, փոշի	տոննա	եռամյակային
24.41.20	ոսկի՝ չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով	7108	ոսկի՝ անմշակ կամ կիսամշակ, փոշի	տոննա	եռամյակային
24.41.30	պլատին՝ չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով	7110	պլատին՝ անմշակ կամ կիսամշակ, փոշի	տոննա	եռամյակային
24.41.40	ոչ թանկարժեք մետաղներ կամ ոսկեզօծ արծաթ՝ չմշակված կամ կիսամշակված	7109	ոսկեջրած արծաթ	տոննա	եռամյակային

24.41.50	ոչ թանկարժեք արծաթազօծ մետաղներ՝ պլատինի պատվածքով ոսկի, արծաթ և ոչ թանկարժեք մետաղներ, չմշակված կամ կիսամշակված	7107	մետաղներ՝ ոչ թանկարժեք, երեսապատված արծաթով, կիսամշակված	տոննա	եռամյակային
		7111	ոչ թանկարժեք մետաղներ, արծաթ կամ ոսկի՝ պլատինով երեսապատված, կիսամշակված	տոննա	եռամյակային
24.42.11	ալյումին՝ չմշակված	7601	ալյումին՝ չմշակված	տոննա	եռամյակային
24.42.12	ալյումինի օքսիդ՝ բացի արհեստական կորունդից	2818	արհեստական կորունդ, ալյումինի օքսիդ և հիդրօքսիդ	տոննա	եռամյակային
24.43.11	կապար՝ չմշակված	7801	կապար՝ չմշակված	տոննա	եռամյակային
24.43.12	ցինկ՝ չմշակված	7901	ցինկ՝ չմշակված	տոննա	եռամյակային
24.43.13	անագ՝ չմշակված	8001	անագ՝ չմշակված	տոննա	եռամյակային
24.44.11	պղնձի շտայն, պղինձ՝ ցեմենտայնացման	7401	պղինձ՝ չմշակված, պղնձի շտայն, պղինձ՝ ցեմենտայնացնող	տոննա	եռամյակային
24.44.12	պղինձ՝ չզտված. պղնձե անոդներ էլեկտրոլիտային զտման համար	7402	պղինձ՝ չզտված, պղնձե անոդ՝ էլ. զտման համար	տոննա	եռամյակային
24.44.13	պղինձ՝ զտած և պղնձի համահալվածքներ, չմշակված. լիգատուրներ՝ պղնձի հիմքով	7403	պղինձ՝ զտված և չմշակված ձուլվածք (արույր, բրոնզ և այլն)	տոննա	եռամյակային
		7405	լիգատուրներ՝ պղնձի հիմքի վրա	տոննա	եռամյակային
23.99.12	ասֆալտից կամ համանման նյութերից արտադրատեսակներ			տոննա	եռամյակային
			ասֆալտից արտադրանք կամ		

23.99.13	բիտումային խառնուրդներ՝ բնական և արհեստական քարի ու բիտումի, բնական ասֆալտի կամ որպես կապակցանյութ օգտագործվող այլ նյութերի հիման վրա	6807	համանման նյութերից (օրինակ, նավթային բիտումից կամ քարածխային կուպրից)	տոննա	եռամյակային
19.20.42	կոքս՝ նավթային, հանքաձյութ՝ նավթային (բիտում) և նավթամշակման այլ թափոններ	2713	նավթավերամշակումից ստացված մնացուկ (կոքս, բիտում)	տոննա	եռամյակային

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան